

երկու ձևերից հեղինակը որն է հիշտ համարում: Դ) Փերականական սխալներ և սխալ ըմբռնումներ, անհաջող կամ թերի բացատրություններ, ուղղադրական, կետադրական սխալներ ու վրիպակներ՝ «պայմանի և զիջական բնույթի բարդ ստորադասական նախադասություններ» (47), «են և դու երթանք առ թագաւորն» — պարզ ընդարձակ նախադասություն է» (47), ըստ նրա (21), հարաձիգություն (16), վերածի կենդանի խոսքի (10), ինքստիներյան

(50), արժեքազրկում է (52, 56), իվեր (44), նախադասություններ (փոխ. նախադրություններ) (39) և այլն:

Չնայած վերոհիշյալ մասնավոր թերություններին՝ գրախոսվող աշխատությունը ամբողջությամբ վերցրած կարևոր գործ է միջնադարի (և ոչ միայն միջնադարի) քերականագիտության ուսումնասիրության բնագավառում:

Է. ՄԿՐՏՅԱՆ

La version grecque ancienne du livre arménien d'Agathange, *édition critique, par GUAY LAFONTAINE, Institut Orientaliste, Louvain-la-neuve, 1973.*

Ազաթանգեղոսի հայերեն մատյանի հունարեն հին քարգմանությունը, փնական բնագիր, աշխատասիրությամբ ԳԻ ԱՖՈՆՏԵՆԻ, Լուվեն, 1973:

«Ազաթանգեղոսի Հայոց պատմության» հայերեն բնագրի և նրան առնչվող բազում հարցերի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունի նրա հունարեն թարգմանության բնագիրը: Հունարեն Ազաթանգեղոսը առաջին անգամ լույս է ընծայվել 1762 թ. Անտվերպենում (Բելգիա) Հ. Ստիլտինգի ձեռքով, ըստ Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարանի XII դարի ձեռագրի¹: Հրատարակիչն իր տրամադրության տակ ունեցել է անժանոթ անձնավորության կողմից վերոհիշյալ ձեռագրից կատարված մի ընդօրինակություն, որի հետևանքով այս հրատարակությունը թերի է ստացվել: Հետադաշտում Վ. Լանդլուան Ազաթանգեղոսի ֆրանսերեն թարգմանության հետ զուգահեռ տվել է նաև հունարեն թարգմանությունը ըստ Հ. Ստիլտինգի հրատարակության: Վերջապես 1888 թ.

Պ. դը Լագարդը², օգտագործելով հենց Լավրենտյան ձեռագիրը, տվեց մի նոր հրատարակություն, աչքի առչել ունենալով նաև հայերեն բնագիրը (ըստ Վենետիկի 1835 թ. հրատարակության):

Սակայն ժամանակի ընթացքում պարզվեց, որ տարբեր ձեռագրերում կան հունարեն Ազաթանգեղոսի բնագրեր, որոնք թեև ամբողջական չեն (ինչպես Լավրենտյանը), այսուհանդերձ որոշ մասերով ավելի ընտիր են և շատ ավելի հին, քան երկար ժամանակ միակ ձեռագիրը համարվող Լավրենտյան օրինակը: Վերջինից այս ձեռագրերի ունեցած տարբերությունները ուսումնասիրել է Ժ. Գարիտը և այն մտցրել գիտական շրջանառության մեջ: Այսուհանդերձ քննական բնագրի պահանջը հայագիտության մեջ դնալով ավելի և ավելի էր զգացվում:

Վերջերս Լուվենում 'րի Լաֆոնտենը հրատարակեց հունարեն մի նորահայտ³ համառոտ խմբագրություն՝ բաղված հունարեն Ազաթանգեղոսից: Սույն հրատարակությունը Գի Լաֆոնտենին հնարավորություն է տվել ավելի մոտիկից ծանոթանալու հունարեն Ազաթանգեղոսի բնագրին:

² „Agathangelus und die Akten Gregors von Armenien“ hrsg. von P. de Lagarde, Göttingen, 1888.

³ X—XI դդ. ընդօրինակված այս ձեռագիրը գտնվում է Սինայի Ս. Կատարինե վանքում, որ, ի դեպ, մինչև օրս արդեն հայտնաբերվել է Ազաթանգեղոսի արարներն երեք ձեռագիր: G. Lafontaine, L'ne Vie grecque abrégée de Saint Grégoire l'Illuminateur (Cod. Sin. Gr. 376), „Le Muséon“, 1973, № 1 | 2:

¹ Ինչիցիայում այժմ գործում է հայագետ քանասերների մի ամբողջ խումբ, որն զբաղվում է զխավորապես Ազաթանգեղոսի հարցերով: Բուլոբին հայտնի են բազմավաստակ բանասեր պրոֆ. Ժ. Գարիտի աշխատությունները հայդասական մատենագրության այս կարևոր հարցի վերաբերյալ, մանավանդ նրա Documents pour l'étude du livre d'Agathange (Vatican, 1946) մենագրությունը, որ հրատարակված է Ազաթանգեղոսի մի նորահայտ բնագիր՝ հունարեն վարքը: Նրա աշակերտներից են ոչ միայն գրախոսվող գրքի հեղինակը, այլև Ս. վան Լարրուրը, որը նույնպես հրատարակել է արարերն մի նորահայտ բնագիր՝ Քարշունի վարքը, որի ձեռագիրը գրված է եղել ասորատառ արարերեն (Revue des Etudes Arméniennes I, VIII, 1971).

Վերջապես, 1973 թ. խուփենում լույս տեսավ հունարեն Ագաթանգեղոսի վաղուց սպասված քննական բնագիրը՝ պատրաստված Գի լաֆոնտենի կողմից: Բանասերը համեմատության է դրել 9 ձեռագիր և 3 պատառիկ, որոնք ընդօրինակված են VII—XII դդ. միջև ընկած ժամանակաշրջանում և գտնվում են հետևյալ վայրերում (նշում ենք նաև ձեռագրերի ժամանակը)՝ Քեմբրիջ (XI—XII դդ.), Դուայ Արքայարան, Անգլիա (XI դար), Ֆլորենցիա (XII դար), Փքրիդա, Մակեդոնիա (X դար), Փարիզ (X դար, երկու օրինակ), Վատիկան, կրկնագիր (նախագրությունը X—XI դդ.), Վատիկան, կրկնագիր (նախագրությունը X դարի), Վատիկան (IX դար), Բեռլինի պատառիկ (XI դար), Վատիկանի կրկնագիր պատառիկ (նախագրությունը VII—VIII դդ.), Վատիկանի կրկնագիր պատառիկ:

Առաջին գլխում հեղինակը տալիս է գոյություն ունեցող ուսումնասիրությունների ընդհանուր տեսությունը: Նա չի կասկածում, որ հայերենն է բնագիրը, որից թարգմանված է հունարենը: Հետաքրքրական է Ագաթանգեղոսի թարգմանության ժամանակի և թարգմանչի հարցի քննարկումը: Նախորդ բոլոր ուսումնասիրողները, սկսած Ա. ֆոն Դուտշմիդից մինչև Պ. Պետերսը, ընդհանրապես այն կարծիքին են եղել, որ հունարեն թարգմանությունը կատարված է VI դարի երկրորդ կեսում: Գի լաֆոնտենը մոտավորապես նույն կարծիքն է հայտնում, սակայն հետևյալ ձևով է տալիս իր եզրակացությունը՝ հունարեն թարգմանությունը կատարված է VI դարի սկզբից մինչև VII դարի վերջը ընկած ժամանակամիջոցում, բայց գերակշռությունը նա տալիս է VI դարին: Թարգմանչի անունը հայտնի չէ և ազգային ծագումը նույնպես դժվար է որոշել: Ըստ Լաֆոնտենի, դժվար է ասել, արգյո՞ք նա հունացած հայ է, թե հայացած հույն, թեև առաջինը համեմատաբար ավելի տարածված երևույթ էր և ավելի հավանական:

Երկրորդ գլուխը ամբողջովին նվիրված է օգտագործված 12 ձեռագրերի քննարկմանը, որը կատարված է մանրամասն վերլուծման ձևով:

Ձեռագրերի դասակարգմանը նվիրված երրորդ գլխում մանրակրկիտ համեմատության են գրված վերոհիշյալ ձեռագրերի առանձնահատկությունները, գրության տարբեր ձևերը և այլն: Լաֆոնտենը երկու խմբի է բաժանում ձեռագրերը՝ Ա խումբ, որի գլխավոր ներկայացուցիչն է Լավրենտյան օրինակը և Բ խումբ, որի մեջ մտնում է ութ ձեռագիր:

Հիմք ընդունելով Ագաթանգեղոսի հայերեն բնագիրը (ըստ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի 1909 թ. հրատարակության)՝ Լաֆոն-

տենը աշխատության շորտորդ գլխում ձեռագրերի բանասիրական մանրագնին համեմատություն է կատարում որոշելու համար, թե ո՞ր հատվածում, ո՞ր ձեռագիրը ավելի հարազատ է հայկական բնագրին: Պարզվում է, որ Լավրենտյան օրինակը ավելի շատ դեպքերում է համընկնում հայկականին, քան Բ խմբի ձեռագրերը:

Գրքի վերջում գրված է հունարեն քննական բնագիրը (էջ 173—345), որն սկզբում ունի Լավրենտյան օրինակում գտնվող առաջաբանը (Արտաշիրի ապստամբության մասին): Պարբերությունների հին համարակալումը (ըստ Պ. գր Լագարգի 1888 թ. հրատարակության) պահպանված է, իսկ լուսանցքում գրված են հայերեն Ագաթանգեղոսի համապատասխան պարբերությունների թվահամարները: Եթե համեմատենք քննական բնագիրը Լավրենտյան օրինակի հիման վրա կատարված նախկին հրատարակության հետ, կտեսնենք, որ թե՛ անուններով, թե՛ ընդհանուր շարադրանքով քննական բնագիրը շատ ավելի հարազատ է հայերեն բնագրին: Օրինակ, Գրիգոր Լուսավորչի հետ Կեսարիա ճանապարհորդող շախմբի 16 նախադրանքների անունների մեջ՝ «Մոփաց» նախադրանքի անունը Լավրենտյան օրինակում չկա, իսկ քննական բնագրում, շնորհիվ նոր ձեռագրերի տվյալների, վերականգնված է Σαφρανω δαδρ, Կամ Խոսրովի ու Տրդատի պատմության բաժնում, երբ Խոսրով թագավորին սպանելուց հետո Տրդատին փախցնում են արևմուտք, վերջինս կոչված է «մանկիկ մի փոքրիկ»⁴, Լավրենտյան օրինակում սա աղավաղվել է (նույնպես և արաբերեն թարգմանության մեջ)⁵, դառնալով αὐτὸς ὁ πῶτος παῖς (ոչ փոքրիկ մանկիկ)՝ հայերենի «մի» բառը ժխտականի տեղ ընդունելով: Բարեբախտաբար քննական բնագրում կա ճիշտ ձևը Σαφρανω δαδρ παῖς⁶:

Հունարեն Ագաթանգեղոսի քննական բնագրի լույս ընծայումը մեծ չափով կարող է հեշտացնել Ագաթանգեղոսին առնչվող հարցերի հետազոտումը և մանավանդ հունարենից կատարված բաղմամբիվ թարգմանությունների ուսումնասիրությունը: Հունարեն Ագաթանգեղոսից են ծագում հունարեն մետափրաստյան խմբագրությունը⁷ (որից ծագում են վրացերեն և

⁴ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», էջ-միածին-Տփղիս, 1909, պարբ. 795:

⁵ Agathangelus, § 135.

⁶ Ագաթանգեղոս, 36:

⁷ «Ագաթանգեղոսի արաբերեն նոր խմբագրությունը», Երևան, 1968, արաբ. բնագիր, էջ 13:

⁸ Agathangelus, § 16.

⁹ Agathangelus, էջ 89—120:

սլավոններեն խմբագրությունները), վերոհիշյալ նորահայտ հունարեն համառոտ խմբագրությունը, որը հրատարակվել է Գի Լաֆոնտենի կողմից և լատիններեն խմբագրությունը¹⁰, Հունարեն Ագաթանգեղոսի համառոտումն են նաև արարներեն հակիրճ խմբագրությունը¹¹ և եթով-

պերենը¹², որն ունի ինչ-որ արարներեն միջանկյալ խմբագրություն: Հունարեն Ագաթանգեղոսի քննական բնագիրը կարևոր է նաև Ագաթանգեղոսի պատմության խմբագրությունների այն մյուս խմբի ուսումնասիրման համար, որը Վարք անունն է կրում:

¹⁰ „Acta Sanctorum“, Sept. VIII, Antverpiae, 1762, էջ 402—413.

¹¹ G. Garitte, Une Vie arabe de St. Gregoire d'Armenie, „Le Muséon“, 1952, № 1—2.

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

¹² „Vida de S. Gregorio“, publ. por F. M. E. Pareira, Lisboa, 1903.